ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՏԱԹԵՎԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ՝ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ԺՆԵՎ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Տաթևիկ Սողոմոնյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև), 2024թ. հունիսի 24-ից 27-ը:

4. Հրավիրող կողմը.

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Տնտեսական համագործակցության և առևտրի բաժին:

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Նորարարություն և մրցունակության քաղաքականության հարցերով ՄԱԿ-ի ԵՏՀ-ի մասնագետների խմբի 17-րդ նստաշրջանին:

6. Քննարկված թեմաները.

Ս.թ. հունիսի 24-ից 26-ը կայացած նստաշրջանին մասնակցել են ինչպես տարբեր երկրների (Գերմանիա, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Իտալիա՝ Հունաստան, Բուլղարիա, Մոնտենեգրո, Ղրղզստան, Ուզբեկստան, Ուկրաինա, Վրաստան, Մոլդովա, Թուրքիա, Ադրբեջան), այնպես էլ միջազգային կազմակերպությունների (UNIDO, UNESCAP, OECD, UNCTAD), մասնավոր հատվածի և կրթական ոլորտի ներկայացուցիչներ:

Միջոցառման շրջանակներում ԵՏՀ-ի մասնագետների խումբն անդրադարձել է 16-րդ նստաշրջանից հետո կատարված աշխատանքներին, Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի,

Ուզբեկստանի «Նորարարություն հանուն կայուն զարգացման» (I4SDR) զեկույցներին, դրանցում ընդգրկված առաջարկությունների կատարման զարգացումներին:

Նստաշրջանի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ նաև շրջանաձև տնտեսության, նորարությունների քաղաքականությունների փոխակերպման, կայուն զարգացման առաջընթացի, կանաչ և կայուն գնումների, թվային ենթակառուցվածքների, արհեստական բանականության վերջին զարգացումների և կլիմայի փոփոխության վրա դրանց ազդեցության վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նստաշրջանի սկզբում անդրադարձ կատարելով Հայաստանի հետ ունեցած համագործակցությանը՝ Տաթևիկ Սողոմոնյանը նշել է, որ հայկական կողմը հետաքրքրված է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի հետ համագործակցության շարունակականությամբ, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական ոլորտի ռազմավարական ծրագրերի համատեքստում համագործակցության նոր շրջանակ ձևավորելու հնարավորությամբ:

Կոմիտեի նիստի ընթացքում տեղի է ունեցել նաև «ԿԶՆ-ների (կայուն զարգացման նպատակների) առաջընթացի արագացում. նորարարության և ՊՄԳ-ի (պետություն-մասնավոր գործընկերության) դերը» թեմայով պանելային քննարկում, որի շրջանակում տարբեր երկրների ներկայացուցիչներ ներկայացրել են իրենց փորձն ու ԿԶՆ-երի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Որպես ՀՀ-ի բանախոս՝ Տաթևիկ Սողոմոնյանը ներկայացրել է ՀՀ կառավարության մոտեցումները ԿԶՆ-երի կատարման ուղղությամբ, ինչպես նաև անդրադարձել այդ ուղղությամբ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից կատարված և ընթացիկ աշխատանքներին:

Նստաշրջանի ընթացքում Տաթևիկ Սողոմոնյանը հանդիպումներ է ունեցել ՄԱԿ-ի ԵՏՀ-ի տնօրեն Էլիզաբեթ Թյուրկի հետ, քննարկել ԿԶՆ-ների իրականացման ուղղությամբ հետագա համագործակցության հնարավորությունները:

Նորարարական քաղաքականության մշակման բաժնի պատասխանատու Յակոբ Ֆեքսերի գլխավորությամբ՝ առանձին հանդիպում է եղել նաև Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են հետագա համագործակցության ուղղությունները, դրանց իրականացման և ֆինանսավորման համար դոնոր գտնելու հնարավորությունները:

Հայաստանի հետ հետագա համագործակցության համար Տաթևիկ Սողոմոնյանն առաջարկել է նոր նախաձեռնություն՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումները և հայկական սփյուռքը» թեմայով:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքներ տանել վերոնշյալ թեմայի ուսումնասիրման վերաբերյալ, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտի ռազմավարական ծրագրերի հաստատումից հետո՝ դիտարկել համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջիկայում նախատեսվում է առցանց հանդիպում կազմակերպել ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու վերոնշյալ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Համագործակցության շարունակականությունը հնարավորություն կտա օգտագործել միջազգային փորձը բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման ծրագրերի իրականացման համար, ինչպես նաև խթանել օտարերկրյա ներդրումները Հայաստանում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

02.07.2024թ.

ՏԱԹԵՎԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

02.07.2024թ.